

Նոյեմբերի 1, 2016թ.

ԿԱՐԾԻՔ

Լրագրողների դեմ բռնությունների կիրառման դեպքերի քննության վերաբերյալ

2015թ. հունիսի 23-ին էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացման դեմ Երևանի Բաղրամյան պողոտայում «Ոչ թալանին» քաղաքացիական նախաձեռնության կազմակերպած հավաքը և նստացույցը դադարեցնելու նպատակով ոստիկանությունը ցուցարարների նկատմամբ կիրառեց հատուկ միջոցներ, որի արդյունքում բազմաթիվ ցուցարարներ ստացան տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ: Բռնություններ կիրառվեցին նաև բազմաթիվ լրագրողների նկատմամբ, ովքեր Բաղրամյան պողոտայում լուսաբանում էին իրադարձությունները: Բռնությունների արդյունքում մի շարք լրագրողներ ստացել են մարմնական վնասվածքներ, վնասվել ու ոչնչացվել են նրանց տեսաձայնագրող սարքերը, ոստիկանության աշխատակիցները խոչընդոտել են լրագրողների մասնագիտական գործունեությունը:

ՀՀ հատուկ քննչական ծառայությունում (ՀՔՕ) 2015թ. հուլիսի 2-ին ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 2-րդ (պաշտոնեական լիազորություններն անցնելը, որը գուցարդվել է բռնություն, զենք կամ հատուկ միջոցներ գործադրելով), 164-րդ հոդվածի 2-րդ (լրագրողի մասնագիտական օրինական գործունեությունը խոչընդոտելը, որը կատարել է պաշտոնատար անձն իր պաշտոնեական դիրքն օգտագործելով) և 185-րդ հոդվածի 1-ին մասով (ուրիշի գույքը դիտավորությամբ ոչնչացնելը կամ վնասելը) հարուցվել է թիվ 62217915 միասնական քրեական գործը: Մի շարք լրագրողներ ստացել են տուժողի կարգավիճակ, հարցաքննվել են որպես վկա: 2008թ. օգոստոսի 6-ին ՀՔՕ-ն տարածեց հայտարարություն այն մասին, որ քրեական հետապնդում է իրականացվել ոստիկանության երկու աշխատակիցների՝ փոխգնդապետ Գ.Դ.-ի և վերջինիս ծառայակցի՝ Ա.Դ.-ի, նկատմամբ, ովքեր կասկածվում են, հունիսի 23-ին իրենց պաշտոնեական դիրքն օգտագործելով, լրագրողի մասնագիտական օրինական գործունեությունը խոչընդոտելու մեջ: Հայտարարության մեջ նաև նշվում էր, որ նրանց պաշտոնավարումը ժամանակավորապես դադարեցվել է: Այդուհանդերձ, հայտարարության տեքստից պարզ չէ, թե նշված ոստիկաններին առաջադրվե՞լ է մեղադրանք, թե՞ ոչ: Պարզ չէ նաև, թե ինչո՞ւ հայտարարության տեքստում չեն նշվել ոստիկանների անունները:

Նշված դեպքերից անցել է արդեն մոտ մեկ տարի և հինգ ամիս, սակայն որևէ քրեական գործ դեռ լուծում չի ստացել: Ավելին, չի ավարտվել նաև այդ գործերի նախաքննությունը: Մինչդեռ, սույն գործի տարբերությունը այլ քրեական գործերից այն է, որ հանգամանքների բերումով առկա են մեծ թվով տեսաձայնագրություններ լրագրողների նկատմամբ առերևույթ բռնությունների մասին, որի պայմաններում պետք է որ քրեական գործի քննությունը չձգձվեր, և նախաքննությունը պետք է որ ավարտված լիներ: Ավելին, որոշ լրագրողներ, ինչպես օրինակ, www.lragir.am լրատվական կայքի լրագրող Թեհմինե Ենոքյանը, ոստիկանությանը տրամադրել է տեսանյութեր առերևույթ բռնությունների մասին, սակայն դրանք ընդամենը կցվել են քրեական գործի նյութերին, և դրանցում առկա տեղեկությունների առթիվ որևէ քննություն չի կատարվել: Ըստ հավաքված տվյալների, որպես տուժող ճանաչված լրագրողների նկատմամբ ամիսներ շարունակ որևէ քննչական կամ դատավարական գործողություն չի կատարվել:

Վերը նշված իրավիճակը բարձրացնում է տուժած լրագրողների և ողջ լրագրողական համայնքի՝ ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածով ամրագրված իշխանությունների կամայականություններից ու անօրինականություններից պաշտպանվելու դեմ երաշխիքի խախտման հարց. իշխանությունները չեն ապահովում լրագրողական համայնքի ազատ արտահայտվելու իրավունքը այլոց ոտնձգություններից: Ավելին, տվյալ դեպքում պետական մարմնի աշխատակիցներն են կատարել ոտնձգություն լրագրողական ազատության դեմ, որի առումով չի ապահովվում խախտումների արագ ու արդյունավետ քննություն:

Մտահոգիչ է այն հանգամանքը, որ նշված իրավիճակը կրկնվում է տարիներ շարունակ: 2015թ. դեկտեմբերի 6-ին տեղի ունեցած Սահմանադրական փոփոխությունների հանրաքվեի օրը տեղի ունեցած բռնությունների փաստով հարուցված քրեական գործերը նույնպես դեռ լուծում չեն ստացել: Այդ դեպքերի առնչությամբ Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեն և լրագրողական մի շարք կազմակերպություններ հանդես են եկել համատեղ հրապարակային հայտարարությամբ՝ պահանջելով իշխանություններից հարուցել քրեական գործ և կատարել մանրամասն ու անաչառ քննություն: Բռնությունների փաստի առթիվ հրապարակայնորեն իր մտահոգությունն է հայտնել նաև ԵԱՀԿ մամուլի ազատության հարցերով ներկայացուցիչ Դունյա Միլատովիչը՝ հայարարելով, որ լրատվամիջոցների ներկայացուցիչների նկատմամբ բռնությունների անպատժելիությունը չի կարելի հանդուրժել: Բռնությունների փաստերը հավաքագրվել ու վերլուծվել են Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի կողմից: Դրանք հրապարակված են կոմիտեի կայքում (www.khosq.am): Թեև բռնությունների փաստով հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 1-ին մասով (ուրիշի գույքը դիտավորությամբ ոչնչացնելը կամ վնասելը) կամ 149-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով (ընտրական իրավունքի իրականացմանը, ընտրական հանձնաժողովների աշխատանքներին կամ ընտրությանը մասնակցող անձանց լիազորությունների իրականացմանը խոչընդոտելը), այդուհանդերձ, որևէ գործով քննությունը դեռ չի ավարտվել և որևէ քրեական գործ նույնպես լուծում չի ստացել:

Ավելորդ չենք համարում նշել, որ բռնությունների և ընդհանրապես լրագրողական մասնագիտական պարտականությունների խոչընդոտման փաստերով արդյունավետ քննություն չկատարելը համընդհանուր սառեցնող ազդեցություն է թողնում հանրության համար կարևոր նշանակություն ունեցող դեպքերի վերաբերյալ տեղեկատվական նյութի ազատ հոսքի վրա, որից տուժում է տեղեկացված լինելու հանրային շահը: Յուրաքանչյուր գործով արդյունավետ ու անկախ քննություն կատարելու հանգամանքը ոչ միայն ծառայում է տվյալ լրագրողի խախտված իրավունքի վերականգնմանը, այլ նաև՝ նվազեցնում ապագայում լրագրողի նկատմամբ ոտնձգություն կատարելու վտանգը: Ըստ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, արդյունավետ քննություն կատարելու իշխանությունների պարտականությունը երբեք չի դադարում գործել, քանի որ հակառակ դեպքում այդ հանգամանքը կհանգեցնի անպատժելիության և անվտանգության բացակայության տվյալ տարածքում՝ այդպիսով ստեղծելով արատավոր շրջան (*Yaşa v Turkey*, No. 63/1997/847/1054, 2/09/1998): Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեն փաստագրել է լրագրողների նկատմամբ ճնշումների և բռնության դեպքերը 2008-2015թթ. ժամանակահատվածում և պարզել, որի մի կողմից առկա է լրագրողների նկատմամբ բռնությունների հարյուրից ավելի դեպք, իսկ մյուս կողմից առկա է միայն մեկ կամ մի քանի լուծում ստացած քրեական գործ:

Վիճակագրական այս երկու տվյալների համադրությունը բացահայտում է վերը նշված արատավոր շրջանի առկայություն, որի համար պատասխանատու են իշխանությունները, ***քանի որ վերը նշված ժամանակահատվածում բռնությունները ճնշող մեծամասնությամբ իրականացվել են ոչ թե մասնավոր անձանց, այլ պաշտոնատար անձանց կողմից: Նման իրավիճակը բարձրացնում է իշխանությունների կողմից լրագրողական համայնքի նկատմամբ քաղաքական անհանդուրժողականության մասին հարց:***

«Այս կարծիքը պատրաստվել է ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի աջակցությամբ «Խոսքի ազատության ոլորտում վեճերի արտադատական լուծումների խթանումը Հայաստանում» ծրագրի շրջանակներում: Այստեղ արտահայտված տեսակետներն ու հետևությունները հեղինակներին են և պարտադիր չէ, որ արտացոլեն ԵԱՀԿ-ի կամ ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի տեսակետները:»

Տեղեկատվական վեճերի խորհուրդ

Արա Ղազարյան - «Արնի Քնսալթ» փաստաբանական
գրասենյակի փոխտնօրեն

Մանանա Ասլամազյան - անկախ մեդիափորձագետ

Բորիս Նավասարդյան - Երևանի մամուլի ակումբի նախագահ

Արամ Աբրահամյան - «Առավոտ» օրաթերթի գլխավոր խմբագիր

Գեղամ Վարդանյան - Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի պրոդյուսեր